Վարչական

ՕՐԱԳԻՐԸ



ՀՏԴ 821.111(73)-93 Քիննի
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44
Ք 560

Քիննի Ջեֆ
Ք 560 Վտվտիկի օրագիրը: Պատկերազարդ վեպ / Ջ. Քիննի; Թարգմանությունն անգլերենից՝ Ա. Հարությունյանի.- Եր.: Newmag, 2023.- 222 էջ:

Երեխա լինելը շատ դժվար է: Գրքի հերոս Գրեգ Հեֆլին կփաստի: Միջին դպրոցում նրա ու իր մտերիմ ընկերոջ՝ Ռաուլի արկածներն անտարբեր չեն թողի ոչ մի երեխայի: Նրանք հայտնվում են ամենատարբեր զվարճալի, զավեշտալի ու տարօրինակ իրավիճակներում: «Վտվտիկի օրագիրը» գրքում հեղինակ և նկարազարդող Ջեֆ Քիննին ծանոթացնում է մեզ անսովոր մի հերոսի՝ Գրեգի հետ, որն իր օրագրում գրում է.

«Հույս չունենաք, որ այստեղ գրելու եմ իմ բոլոր «հույզերը» կամ նման մի բան: Չէ մի չէ: Ոչ մի «Բարև՛, սիրելի՛ օրագիր» կամ «Բարև՛, իմ օրագի՛ր»»:

Բարեբախտաբար մեզ համար, Գրեգ Հեֆլիի գրածն ու արածը երկու տարբեր բաներ են:

Գիմ. նախատեսված է 9-12 տարեկան երեխաների համար:

ՀՏԴ 821.111(73)-93 Քիննի
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-44

ISBN 978-9939-884-92-9
Ջեֆ Քիննի «Վտվտիկի օրագիրը» © 2023, «Նյու Մեգ» ՍՊԸ
Wimpy Kid text and illustrations copyright © 2007 Wimpy Kid, Inc.
DIARY OF A WIMPY KID®, WIMPY KID™, and the Greg Heffley design™
are trademarks of Wimpy Kid, Inc. All rights reserved.
First published in the English language in 2007
by Amulet Books, an imprint of ABRAMS, New York
ORIGINAL ENGLISH TITLE: DIARY OF A WIMPY KID
(All rights reserved in all countries by Harry N. Abrams, Inc.)

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել հեղինակի հետ կնքված պայմանագրով:

«Երազ» մատենաշարի գործընկեր
YERAZ PROJECTS

ՍԵՊՏԵՄԲԵՐ

Երեքշաբթի

Նախ ասեմ, որ սա ՀՈՒՇԱԳԻՐՔ է ու ոչ թե օրագիր: Չէ՛, գիտեմ՝ շապիկի վրա ինչ է գրված, բայց մայրիկիս ՀԱՏՈՒԿ խնդրել էի, որ խանութում ուշադիր լինի և ընտրի առանց «օրագիր» բառի:

Դե հիմա: Ընդամենն ուզում էի, որ սա ձեռքիս տեսնողները չհասկանային, որ օրագիր է:



Մի բան էլ ասեմ, ու անցնենք առաջ. ֆիքսենք, որ այս ամենը ՄԱՅՐԻԿԻՍ գաղափարն էր, ոչ թե իմը:

Երևի հույս ունի, որ այստեղ գրելու եմ իմ բոլոր «հույզերը» կամ նման մի բան: Չէ մի չէ: Ոչ մի «Բարև՛, սիրելի՛ օրագիր» կամ «Բարև՛, իմ օրագի՛ր»:

Մի բանի համար եմ գրում. որ հետո, երբ շատ հարուստ ու հայտնի դառնամ, ստիպված չլինեմ պատասխանել հիմար հարցերի: Թող նստեն ու կարդան սա:

Ասացի, չէ՞, որ մի օր ես շատ հարուստ եմ լինելու, բայց հիմա ստիպված եմ դմբլոների հետ դպրոց գնալ:



Եկեք անկեղծ ասեմ՝ ինչ եմ մտածում. միջին դպրոց ստեղծելու գաղափարից հիմար բան չկա: Ինձ պես երեխաներին, որոնց հասունացման շրջանը դեռ չի սկսվել, բերում ու խառնում են այս գորիլաների հետ, որոնք օրը երկու անգամ սափրվում են:

Հետո էլ ասում են՝ ինչի է միջին դպրոցներում բուլինգն այդքան շատ:

Եթե ես լինեի որոշողը, դասարանները կբաժանեի ըստ հասակի, ոչ թե տարիքի: Բայց դա էլ կնշանակեր, որ Չիրագ Գուպտայի պես աշակերտները միշտ կմնային առաջին դասարանում:



Այսօր դպրոցի առաջին օրն է, ու մենք կանգնած սպասում ենք, թե երբ է ուսուցիչը գլխի ընկնելու, որ պետք է մեզ ըստ տեղերի նստեցնի: Մտածեցի, որ ժամանակ չվատնելու համար ավելի լավ է՝ գիրքս գրեմ:

Իմիջիայլոց, մի լավ խորհուրդ տամ: Դպրոցի առաջին օրը պետք է շատ ուշադիր լինես, թե ուր են նստեցնում քեզ: Մտնում ես դասարան, իրերդ դնում ես սեղանին, որ սպասես, մեկ էլ ուսուցիչն ասում է.

Ու այնպես է ստացվել, որ իմ դիմաց նստում է Քրիս Հոզին, հետևի նստարանին՝ Լիոնել Ջեյմսը:

Ջեյսոն Բրիլն ուշացած եկավ ու քիչ էր մնում՝ կողքս նստեր: Լավ էր՝ արագ կողմնորոշվեցի ու կանխեցի:



Հաջորդ քայլով ես հայտնվեցի երկու շատ հմայիչ աղջիկների մեջտեղում, բայց կարծում եմ, որ իմ այդ քայլով ապացուցեցի, որ անցած տարուց ոչ մի դաս չեմ քաղել:

Էհ: Չգիտեմ, թե ԻՆՉ է կատարվում այս աղջիկների հետ: Տարրական դպրոցում ավելի հեշտ էր: Բանաձևը սա է. ով ամենաարագն է վազում, նա էլ գրավում է բոլոր աղջիկների սրտերը:

Հինգերորդ դասարանում ամենաարագավազը Ռոնի Մակքոյն էր:

Հիմա ամեն ինչ ավելի է բարդացել: Այսօր նայում են քո հագուկապին, թե որքան հարուստ ես, կլորիկ տուտուզ ունե՞ս, թե՞ ոչ, ու նման բաներ: Ու Ռոնի Մակքոյի տիպի երեխաները զարմանքից գլուխներն են քորում, որ հասկանան՝ ինչն է փոխվել:

Բրայս Վնդերսոնը մեր դասարանի ամենաթույն դեմքն է: Վ՛խր, ես ՄԻՇՏ եմ աղջիկներին դուր եկել, բայց արի ու տես, որ վերջին տարիներին Բրայսի պես դեմքեր են ի հայտ եկել:

Շատ լավ հիշում եմ, թե Բրայսը տարրական դպրոցում ինչպես էր իրեն պահում:

Ու դե, իհարկե, հիմա էլ ոչ մի օգուտ չկա աղջիկներին պաշտպանելուց:

Դասարանի ամենաթույն տղան Բրայսն է, ու մյուս բոլոր տղաները պետք է պայքարեն այլ «պաշտոնի» համար:

Ոնց հաշվում եմ այս տարվա թույն դեմքերի մեջ 52-րդն եմ կամ 53-րդը: Բայց մի լավ լուր կա. առաջիկայում մեկ քայլ առաջ եմ անցնելու, որովհետև Չառլի Դեյվիսը եկող շաբաթ բրեկետ է դնելու ու չի գալու:

Այս ամենը փորձում եմ բացատրել իմ ընկեր Դաուլին (որն ամենայն հավանականությամբ 150-րդ տեղում է, ի դեպ), բայց ինչ պատմում եմ, մի ականջից մտնում է, մյուսից դուրս է գալիս:



Չորեքշաբթի

Այսօր՝ ֆիզկուլտի ժամին, հենց շենքից դուրս եկա, վազեցի բասկետբոլի կորտ: Ուզում էի տեսնել՝ հոտած պանիրը դեռ էնտեղ է, թե ոչ: Էնտեղ էր, բա ինչ:





Պանիրն անցած գարնանից նույն տեղում է: Երևի մեկի սենդվիչից է ընկել: Մի քանի օր այդպես մնաց, հետո բորբոսնեց ու հոտեց: Բասկետբոլի կորտի այդ մասում ոչ ոք չէր խաղում, ինչքան էլ այդ հատվածից հեշտ էր գնդակը զամբյուղը գցելը:

Մի օր Դարեն Ուալշը մատով կպավ այդ նեխած պանրին, ու սկսվեց «Պանրոտ բռնոցի» խաղը: Սովորական բռնոցիի պես է, բայց երբ պանրոտ ձեռքը քսում են քեզ, դառնում ես «Պանրոտ»: Մինչև դու էլ ուրիշին քսես:



Պանրոտից պրծնելու համար պիտի մատներդ խաչես: